

ԵԹԷ...

Եթէ բամբասէս նմանդ, որուն համար Քրիստոս կը բարեխօսէ երկինքի մէջ՝ բամբասող պիղծ ոգիներուն հետ դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ բարին խօսիս անոր մասին՝ դատաստանի օրը Բարին զաւակը պիտի հռչակուիս:

Եթէ զրպարտես նմանդ, որուն համար Աննմանը մեր նման դարձաւ՝ զրպարտիչ Բելիարին հետ դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ շինիչ խօսքերով գօտեպնդես զայն՝ դատաստանի օրը Աստուծոյ Բանին միջոցաւ՝ Աստուծոյ արքայութիւնը պիտի ժառանգես:

Եթէ մա՛հ ցանկաս նմանիդ, որուն համար Անմահը մեռաւ՝ դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ կեանք ցանկաս անոր համար՝ դատաստանի օրը կեանքի Տուիչը կեանք պիտի տայ քեզի:

Եթէ ասեա նմանդ, որուն սիրոյն համար Աստուած մեռաւ՝ երկինքի կողմէ ասելի դարձած դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ սիրես թշնամիդ՝ դատաստանի օրը սուրբերուն հետ պիտի դասուիս:

Եթէ երեսի վրայ թողուս նմանդ, որուն համար Աստուծոյ երեսը ապտակուեցաւ՝ աներեսներու հետ դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ երեսի վրայ չթողուս զայն՝ դատաստանի օրը Աստուծոյ երեսը պիտի տեսնես եւ անոր գեղեցկութիւնը արտացոլացնես:

Եթէ զրկես նմանդ, որուն համար Աստուած ժամանակուան մը համար իր փառքէն զրկուեցաւ՝ Աստուծոյ ներկայութենէն զրկուած դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ ձեռք երկարես զրկուածին՝ դատաստանի օրը Քրիստոս քեզի պիտի շնորհէ այն փառքը եւ այն փառաւոր մարմինը որմէ զրկուած ես երկրի վրայ:

Եթէ վիրաւորես նմանդ, որուն համար Աստուած վիրաւորուեցաւ՝ վիրաւից կերպով դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ փաթթես վիրաւորին վերքերը՝ դատաստանի օրը Տէրը պիտի բուժէ սրտիդ ու հոգիիդ վերքերը գորս ստացեր ես երկրի վրայ՝ երկրաւորներուն ձեռքէն:

Եթէ վատ խօսքերով մրոտես նմանիդ անունը, որուն համար հայհոյուեցաւ Տիրոջ սուրբ անունը՝ հայհոյողներուն հետ դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ լաւ խօսքերով արտայայտուիս անոր մասին՝ դատաստանի օրը խոստացուած նոր անունին պիտի արժանանաս:

Եթէ անարգես նմանդ, որուն համար Աստուած անարգուեցաւ՝ անարգ պղինձի նման դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ պատուես տկարը՝ դատաստանի օրը Ամենազօրին կողմէ պատիւի պիտի արժանանաս:

Եթէ նախատես նմանդ որուն համար Տէրը նախատինքներ կրեց՝ նախատուած դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ յարգանք ունենաս Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդուն հանդէպ՝ դատաստանի օրը Աստուծոյ ձեռքով փառաւորուած երկինք պիտի մտնես:

Եթէ անտեսես նմանդ, որուն համար անտեսանելին Աստուած տեսանելի դարձաւ՝ մարդոց տեսանելի կերպով դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ պաշտպան ըլլաս անտեսուածին եւ անոր տեսութեան երթաս՝ դատաստանի օրը Աստուծոյ տեսութեան պիտի արժանանաս:

Եթէ անտէր թողուս նմանդ, որուն համար տէրերու Տէրը մարմին առաւ՝ անտէր կերպով դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ տէր կենաս անտէր եղողին՝ դատաստանի օրը տէր պիտի կենայ քեզի Տէրը:

Եթէ դուն քեզ բարձրացնելու համար գետին զարնես նմանդ, որուն համար Քրիստոս գետին դրուեցաւ՝ դժոխքի գետը պիտի նետուիս: Իսկ եթէ գետին տապալածը բարձրացնես՝ դատաստանի օրը Քրիստոսի ուսերուն վրայ պիտի բարձրացուիս:

Եթէ ծաղրես նմանդ, որուն համար Աստուած ծաղր ու ծանակ եղաւ՝ չար ոգիներուն կողմէ ծաղր դարձած դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ ծաղրուածին նեցուկ ըլլաս՝ դատաստանի օրը Հօգորն Աստուած նեցուկ պիտի ըլլայ քեզի:

Եթէ սուտ վկայութիւն տաս նմանիդ մասին, որուն համար Ճշմարիտը ճշմարտապէս մարդեղացաւ՝ ստախօս Սատանային հետ դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ պաշտպան ըլլաս սուտ վկայութեան զոհ գացած անձին՝ դատաստանի օրը Ճշմարիտին ու ճշմարտութեան զաւակ պիտի ճանչցուիս:

Եթէ հալածես նմանդ, որուն համար Աստուած հալածուեցաւ չարերուն կողմէ՝ չարերուն հետ դժո՛խք պիտի նետուիս: Իսկ եթէ հալածուածներուն ու մերժուածներուն կողքին կենաս՝ դատաստանի օրը Յիսուս քեզ իր գրկին մէջ պիտի ընդունի:

Եթէ նեղութիւն տաս նմանիդ, որուն համար Աստուծոյ Որդին մեծ նեղութիւններու հանդիպեցաւ՝ նեղ վիճակի մատնուած դժո՛խք պիտի նետուիս: Իսկ եթէ աշխատիս նեղութեան մէջ եղողին բուժում ըլլալ՝ դատաստանի օրը բուժումիդ օրը պիտի ըլլայ:

Եթէ անիծես նմանդ, որուն համար օրհնեալ Տէրը անէծք դարձած խաչին վրայ գամուեցաւ՝ անիծեալ յայտարարուած դժո՛խք պիտի նետուիս: Իսկ եթէ օրհնես քեզ անիծող մարդիկը՝ դատաստանի օրը օրհնեալ Աստուծոյ օրհնեալ զաւակը պիտի հոչակուիս:

Եթէ ցաւցնես նմանդ, որուն համար Աստուած անտանելի ցաւեր կրեց՝ մեծ ցաւերու մատնուած դժո՛խք պիտի նետուիս: Իսկ եթէ բուժես մարդոց ցաւերը՝ դատաստանի օրը Բժիշկը յաւիտենական հանգիստը պիտի պարգեւէ քեզի:

Եթէ չար ծրագիրներ մշակես նմանիդ համար, որուն համար Աստուած բարի ծրագիրներ ունի՝ չար ծրագիրներու խափանիչ Աստուծոյ հրամանով դժո՛խք պիտի նետուիս: Իսկ եթէ բարին ծրագրես անոր համար՝ դատաստանի օրը քեզի համար ունեցած Աստուծոյ բարի ծրագիրը պիտի իրականանայ:

Եթէ դրամի սիրոյն մատնես նմանդ, որուն համար Յիսուս մատնուեցաւ՝ մատնիչ Յուդային հետ դժո՛խք պիտի նետուիս: Իսկ եթէ դրամասէրներուն կողմէ մատնուածները ազատես՝ դատաստանի օրը ազատութեանդ օրը պիտի ըլլայ:

Եթէ նմանիդ կորստեան պատճառ
ըլլաս, որուն փրկութեան համար Փրկի-
չը մեռաւ՝ կորսուածներու հետ դժո՛խք
պիտի նետուիս: Իսկ եթէ կորսուածի մը՝
դարձին ու փրկութեան պատճառ ըլլաս
դատաստանի օրը հոգիդ կը փրկես:

Եթէ մեղադրես նմանդ, որուն մեղքե-
րու քաւութեան համար Անմեղը մեղա-
ւորներուն ձեռքը ինկաւ՝ անզիդ մեղա-
ւորներու հետ դժո՛խք պիտի նետուիս:
Իսկ եթէ դուն քեզ մեղադրես՝ դատաս-
տանի օրը մեղքերէդ սրբուած պիտի
յայտարարուիս:

Եթէ անարդարութիւն գործես նմա-
նիդ դէմ, որուն համար արդարն Աստ-
ուած անարդար կերպով չարչարուե-
ցաւ՝ արդարադատ Քրիստոսի ձեռքով
դժո՛խք պիտի նետուիս: Իսկ եթէ արդա-
րութիւնը սիրես ու գործես՝ դատաս-
տանի օրը Արդարին կողմէ արդարու-
թեան պսակ պիտի ստանաս:

Եթէ դատապարտես նմանդ, որուն համար Տէրը դատապարտեալի մը պէս խաչին բեւեռուեցաւ՝ դատապարտեալ հռչակուած դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ չդատապարտես զայն՝ դատաստանի օրը Դատաւորը պիտի չդատապարտէ քեզ:

Եթէ դատես նմանդ, որուն համար երկինքի ու երկրի Դատաւորը մեռաւ՝ դատուած դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ դուն քեզ դատես գործած մեղքերուդ համար՝ դատաստանի օրը մաքուր պիտի յայտարարուիս:

Եթէ անգութ ըլլաս նմանիդ հանդէպ, որուն համար Գթառատը անգութօրէն ծեծուեցաւ՝ անգութներուն հետ դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ գթառատ ըլլաս գթութեան կարօտ մարդուն հանդէպ՝ դատաստանի օրը գթառատներուն համար պատրաստուած երկինքը պիտի մտնես:

Եթէ ծուղակ լարես նմանիդ, որուն ազատութեան համար Տէրը ինքզինք կամովին ծուղակ լարողներուն ձեռքը յանձնեց՝ ծուղակալար չար ոգիներուն հետ դժո՛խք պիտի նետուիս: Իսկ եթէ զայն զգուշացնես իրեն համար լարուած ծուղակներէն՝ դատաստանի օրը յաւիտենական ծուղակէն ազատած՝ յաւիտենական կեանքը պիտի ժառանգես:

Եթէ չարիք ցանկաս նմանիդ՝ բարին ցանկացող Տէր Յիսուսի դատաստանով դժո՛խք պիտի նետուիս: Իսկ եթէ բարին ցանկաս անոր՝ դատաստանի օրը բարեբան հրեշտակներուն երգակից պիտի ըլլաս:

Եթէ նմանիդ օգնութեան ձեռք չերկարես՝ անօգնականին օգնական Աստուծոյն ձեռքով դժո՛խք պիտի նետուիս: Իսկ եթէ անօգնականին օգնական ըլլաս՝ դատաստանի օրը Աստուծոյ օգնութիւնը պիտի վայելես:

Եթէ չար բան մտածես նմանիդ մասին՝ չար միտքերը տեսնող ու գիտցող Աստուածորդիին ձեռքով դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ բարի մտածումներ ունենաս նմանիդ մասին՝ դատաստանի օրը բարին սիրող բարի Յիսուսին ձեռքէն բարիքներ պիտի ստանաս:

Եթէ անձնական շահերէդ մեկնած բարի մարդիկը չար կոչես ու չար մարդիկը բարի՝ Բարիին վճիռով դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ Աստուծոյ փառքին համար տէր ու քաջալերող ըլլաս բարիին՝ դատաստանի օրը երկինքի բարութիւնը պիտի ժանազես:

Եթէ ուրախանաս նմանիդ անկումին համար՝ Սատանայ դարձած Արուսեակ անկեալ քերովբէին հետ դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ ինկածը վերցնես՝ դատաստանի օրը Բարձրեալին հրամանով երկինքներու բարձունքը պիտի վերցուիս:

Եթէ անտարբեր ըլլաս նմանիդ վիշտին հանդէպ՝ տարբեր Եղողին մականով վշտալից դժոխքը պիտի նետուիս: Իսկ եթէ վշտակից ու մխիթարիչ ըլլաս անոր՝ դատաստանի օրը վիշտերու Փարատիչին հպումով յաւերժապէս պիտի փարատին վիշտերդ:

Եթէ կամովին ականջներդ փակես աղքատին ձայնին առջեւ՝ աղքատասէր Յիսուսին խօսքով դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ ողորմութեամբ ուրախացնես աղքատը՝ դատաստանի օրը Աղքատասէր Փրկչին ուրախութիւնը պիտի ըմբռնես:

Եթէ վարկաբեկես նմանդ կամ ուրախանաս անոր վարկաբեկումին համար՝ վարկաբեկուած կեղտոտ ոգիներուն հետ դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ մեծարես խեղճը՝ դատաստանի օրը Մեծին կողմէ մեծարուած՝ Աստուծոյ փառքով պիտի զարդարուիս:

Եթէ յափշտակես իրաւունքը նմանիդ, որուն համար իրաւունքի պաշտպան Աստուածը աշխարհ եկաւ՝ անիրաւներուն հետ դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ անիրաւուածներուն կողքին կենաս եւ անոնց իրաւունքներու ձեռք բերումին համար աշխատիս՝ դատաստանի օրը իրաւագօր Աստուածը հարիրապատիկ պիտի վերադարձնէ քեզի ինչ որ մարդիկ խլեցին քեզմէ երկրի վրայ:

Եթէ արցունք հոսեցնես նմանիդ աչքէն, որուն համար Քրիստոս Գեթսեմանիի պարտեզին մէջ արիւնի նման արցունք հոսեցուց՝ սգաւորներուն արցունքը Սրբողին պատուերով դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ մխիթարես կեանքի պայմաններուն բերումով սգաւոր դարձած մարդիկը՝ դատաստանի օրը Մխիթարիչին քաղցր մխիթարութիւնը պիտի վայելես:

Եթէ տանջես նմանդ, որուն համար Աստուծոյ Որդին տանջուեցաւ՝ դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ տանջուածին տանջանքը փարատես՝ դատաստանի օրը յաւիտենական ուրախութեան դուռը պիտի բացուի առջեւդ:

Եթէ բախտագուշակի դիմես հակառակորդիդ թուղթ ընելու համար՝ պիղծ կախարդներուն հետ դժոխք պիտի նետուիս: Իսկ եթէ Տիրոջ դիմես աղօթք ընելու անոր համար՝ դատաստանի օրը սուրբերու վարձք պիտի ստանաս:

Եթէ դառնացնես նմանիդ կեանքը, որուն սիրոյն Յիսուս դառն քացախ ըմպեց՝ դառն դժոխքը պիտի նետուիս: Իսկ եթէ Տիրոջ քաղցրութեան արտացոլացումը ըլլաս անոր համար՝ դատաստանի օրը Տիրոջ քաղցրութեամբ պիտի համակուիս. Տիրոջ՝ որուն կը վայելէ ամէն փառք ու փառաբանութիւն, ամէն երգ ու երկրպագութիւն: Ամէն:

Վաղինակ Օ. Վրդ. մելոյեան